Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Նաիրի Թորոսյան Թելմանի>> Ա/Ձ-ի ընդդեմ Վաղարշապատի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինություն բյուջետային ՀՄ-ի՝ Վաղարշապատի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինություն բյուջետային ՀՄ-ի տնօրեն Մ.Աբրահամյանի 2024թ. հոկտեմբերի 01-ի թիվ 120 ծանուցմամբ Նաիրի Թորոսյան ԱՁ-ի հետ 09.09.2024թ.-ին կնքված թիվ ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 24/7 գնման պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել ամբողջությամբ.

1.1. անվավեր ճանաչել Վաղարշապատի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինություն բյուջետային ՀՄ-ի տնօրեն Մ.Աբրահամյանի 2024թ. հոկտեմբերի 01-ի թիվ 120 ծանուցմամբ Նաիրի Թորոսյան ԱՁ-ի հետ 09.09.2024թ.-ին կնքված թիվ ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 24/7 գնման պայմանագիրը <u>մասնակի միակողմանի լուծելու մասին որոշումը</u>:

2. Վաղարշապատի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինություն բյուջետային ՀՄ-ից հօգուտ <<Նաիրի Թորոսյան Թելմանի>> Ա/Ձ-ի բռնագանձել 30

000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վաղարշապատի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինություն բյուջետային ՀՄ-ից հօգուտ <<Նաիրի Թորոսյան Թելմանի>> Ա/Ձ-ի բռնագանձել 70 000.00 փաստաբանի վարձատրության գումարը:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am